Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

*Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացէք.*

# Վ. Ի. ՈՒԼԵԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)

*Համառօտ կենսագրութիւն*

*(պատկերով)*

**Թարգ. ԵՍԱՂ. ԼԱԼԱ.**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 26 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ № 26

ՄՈՍԿՒԱ—1919

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

*Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք.*



# Վ. Ի. ՈՒԼԵԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)

*Համառօտ կենսագրութիւն*

*(պատկերով)*

Թարգ. ԵԱՂ. ԼԱԼԱ

Գինը՝ 1 ռուբ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
№ 26 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ № 26
ԵՐԵՎԱՆ—1919



*Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ*

*Վ. Ի. Ուլյանով (Ն. Լենին)*

66 - ԱԳՀ

Տպարան՝ Կենտր. Հայկակ. Կոմիսար., Մոսկվա, Արմյանսկի փ., տ. 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянский пер., 2

# Վ. Ի. ՈՒԼԵԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)

Ընկ. Լենինի անունը յայտնի դարձաւ աշխարհի բոլոր մասերում։ Մի քանիսն այդ անունը արտասանում են կատաղի զայրոյթով, իսկ ուրիշները մեծ սիրով և հաւատով։

Դէպի նա անտարբեր մարդ չկայ։ Այս իսկ պատճառով էլ պարզ է ու շատ հասկանալի մեր բազմաթիւ ընկերների ցանկութիւնն, որոնք կամենում են ծանօթանալ ժողովուրդների պատմութեան մէջ տեղի ունեցած մեծ յեղափոխութեան առաջնորդի ու ռահվիրայի՝ ընկեր Լենինի կեանքի և գործունէութեան հետ։

## Ծ ա գ ո ւ մ ը.

Վլադիմիր Իլիչ Ուլեանովը, (Ն. Լենին) ծնուեց 1870 թ. ապրիլի 10-ին Սիմբիրսկ քաղաքում։ Նրա հայրը, ծագումով գիւղացի, այնտեղ ժողովրդական դպրոցների տեսչի պաշտօն էր վարում և վայելում էր իր շրջանի թէ գիւղական և թէ քաղաքային ուսուցիչների սէրն ու համակրութիւնը։

Վլադիմիր Իլիչը շատ լաւ էր սովորում և դեռ գիմնազիայում եղած ժամանակ, աչքի էր ընկնում իր շարադրութիւններով։ Ուսուցիչները բա-

լորն էլ հաստատված էին, որ նա վերջը լինելու է լավ գրող և հայտնի գրականագետ։

1887 թ. երբ Վ. Ի. գիմնազիայի վերջին դասարանումն էր, Պետերբուրգում կախեցին նրա մեծ եղբայր Ալեքսանդր Իլյիչ Ուլյանովին, որը մահափորձ էր կատարել Ալեքսանդր III-ի կյանքի վրա։ Եղբոր հետ պատահած դեպքը շատ խորն և ցնցիչ ներգործություն ունեցավ Վլադիմիր Իլյիչի և ընդհանրապես նրանց ընտանիքի բոլոր անդամների վրա և ծառայեց նրանց բոլորի համար կարծես [illegible], հեղափոխական գործի ասպարեզը նետվելու համար։

## Ուսանողական տարիները.

Գիմնազիան ավարտելուց հետո, Վլադիմիր Իլյիչը մտավ Կազանի համալսարանի իրավաբանական բաժինը։ Մայրաքաղաքների համալսարանների դռները նրա առաջ ամուր փակված էին, ինչպես մահվան դատապարտված ահաբեկչի եղբոր համար։ Վլադիմիր Իլյիչը երկար ժամանակ չմնաց ուսանող, մի ամսից հետո նրան համալսարանից արտաքսեցին ուսանողական շարժմանը մասնակցելու պատճառով և միայն չորս տարիներ անցնելուց հետո, նա հնարավորություն ստացավ քննությունները տալու։ Վերջիշյալ չորս տարիներն իզուր չանցան Վլադիմիր Իլյիչի համար։ Ունենալով

ուժեղ կամք և սովոր լինելով նստակեաց կեանքի, նա շատ յամառ կերպով պարապեց իր ինքնազարգացման վրայ, պատրաստուելով այն յեղափոխական աշխատանքի համար, որը յետագայում նրա կեանքի նպատակը կազմեց: Այս ժամանակներին են վերաբերում նրա առաջին փորձերը, որով ուզում էր յարաբերութեան մէջ մտնել այն ժամանակուայ յեղափոխական երիտասարդութեան հետ:

## Յեղափոխական աշխատանքը.

Համալսարանն աւարտելուց անմիջապէս յետոյ, Վլադիմիր Իլիչը տեղափոխուեց Պետերբուրգ, և այդ ժամանակուանից իրեն ամբողջովին նուիրեց յեղափոխական գործին։ Պետերբուրգում «բանուոր—դասի ազատութեան համար կռուող միութիւն» կազմուեց, որն առաջնորդում էր դեռ ևս բոլորովին նոր սկսուած բանուորական շարժումը։ Այս միութիւնը, պրոպագանդա և ագիտացիա էր մղում։ Նրա անդամները շատով ձերբակալուեցին և մի ամբողջ տարուց աւելի բանտում նստելուց յետոյ, Սիբիր աքսորուեցին։ Վլադիմիր Իլիչը աքսորավայրում երեք տարի մնաց և տնտեսական հարցերի շուրջը մի քանի շարադրութիւններ գրեց։ Նրանցից ամենամեծն է «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը և մի քանի անլեգալ բրոշիւրներ։

### «Իսկրա»-ի արտասահմանեան աշխատանքը.

Աքսորից վերադառնալով, Վլադիմիր Իլյիչ արտասահման է գնում, որտեղ Մարտովի, Պոտրեսովի և «Աշխատանքի ազատութիւնը» խմբակի անդամների հետ, 1900 թ. հիմնում է «Իսկրա» թերթը։ «Իսկրայի» նպատակն էր, յեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միութեան նախապատրաստութիւնը և բանւորական դասակարգային կռւի և նրա կուսակցութեան առաջնորդութիւնը։ Մեր յեղափոխական կռւի մէջ, ոչ մի թերթ այն դերը չի խաղացել, ինչ որ «Իսկրան», որը գաղտնի կերպով Ռուսաստան էին բերում և տարածում բանւորների մէջ։ Եւ մինչև վերջին կէտը կարդացւում էին այդ բանւորական սիրելի օրգանի բարակ թերթիկները։ Այդ ժամանակից, յեղափոխական աշխատանքի առաջնորդող կենտրոնը գտնւում էր արտասահմանում։ Այնտեղ հրատարակւում էր անլեգալ գրականութիւն, այնտեղ էին կանչւում և տեղի ունենում կուսակցական համագումարները և խորհրդակցութիւնները։ Այնտեղից էին դուրս գալիս կուսակցական բոլոր ցուցմունքները։

Վլ. Իլյիչը ամբողջ ժամանակ գտնւում էր այս աշխատանքի կենտրոնում։ Նրա ամբողջ կեանքն և մտքերը պատկանում էին կուսակցութեանը և յե-

ղափոխական աշխատանքին։ Մօտիկ մարդիկ, ովքեր նրան լաւ ճանաչում էին, շարունակ զարմանում էին, թէ որքան քիչ ուշադրութիւն է դարձնում իր անձնական կարիքների ու պէտքերի վրայ, ինչպիսի յամառութեամբ և անդրդուելի եռանդով շարունակ նա աշխատում է։

Առաջին յեղափոխութիւն.

1905 թ. Վլադիմիր Իլյիչը կարճ ժամանակով վերադառնում է Ռուսաստան։ Բայց Պետերբուրգում ազատ ապրել նրան մէկ օր է միայն յաջողւում, իսկ յետոյ ստիպւած է լինում անլեգալ կերպով ծածկւել, առաջ Պիտերում, իսկ յետոյ Ֆինլանդիայում։ Յաղթանակը տանող հակայեղափոխութիւնը հարկադրում է նրան կրկին արտասահման վերադառնալ և այս անգամ նա հազիւ հազ է կարողանում ցարական լրտեսներին խաբել և ձերբակալումից ազատուել։

Կրկին արտասահմանում.

Եւ նորից սկսւում են արտասահմանեան թափառումների, զրկանքների և ջղային քայքայումների երկար ու ձիգ տարիները, ժողովրդից կտրւած, էմիգրանտի կեանքի սոսկալի մթնոլորտի մէջ։ Եւ չնայելով սրան, անյողդողդ կերպով առաջ էր տարւում յամառ, սրբազան աշխատանքը, յանուն մեծ գործի, յանուն աշխատաւոր դասի ազատութեան։

Վլադիմիր Իլյիչը շատ բրոշյուրներ և յօդուածներ գրեց, զանազան լեգալ և անլեգալ թերթերում և ամսագրերում։ Նրանց մեծագոյն մասը լոյս տեսաւ առանց ստորագրութեան կամ զանազան կեղծ անունների տակ, ինչպէս օրինակ Վ. Իլյին, Տուլին և այլն։ Այս ժամանակները սոսկալի կերպով հալածուած էր յեղափոխական շարժումը և բաւական էր մի յայտնի յեղափոխականի ազգանուն, որ թերթը և յօդուածը ենթարկուէին խիստ պատժի և արգելման։

Այդ ժամանակների կուսակցական գործիչները ճանաչում էին Վլադիմիր Իլյիչին, ամենից շատ «Լենին» ազգանուան տակ և այս կեղծ անունը մինչև վերջն էլ նրա վրայ մնաց։

1902 թ. Վլադիմիր Իլյիչը տեղափոխուեց Կրակով, որտեղից Ռուսաստանին մօտ լինի և կարողանայ այդտեղից աշխատակցել այդ ժամանակները նոր լոյս տեսնող «Պրաւդա» թերթին։

## Լենինի հայեացքները.

Իր հայեացքներով Վլ. Իլյիչը շարունակ եղել է անհաշտ հեղափոխական մարքսիստ, յամառօրէն կռիւ մղելով յեղափոխական մարքսիզմից անջատուած բոլոր խոտորումների և երերումների դէմ, որոնք թեքուած են եղել համաձայնութեան կողմը, բուրժուազիայի հետ։ Նրա անհաշտ, մարտնչող «անխնայ»

լօզունգները» հաստատում էին հէնց կեանքի կողմից և իրենց շուրջ էին հաւաքում աւելի և աւելի բանւորների շերտեր։

## Վերջապէս Ռուսաստանում.

Պետերբուրգի բանւորների յաղթութեան հէնց առաջին լուրի հետ, Վլադիմիր Իլիչը ցանկացաւ Ռուսաստան թռչել, որպէսզի կարողանայ գործնական մասնակցութիւն ունենալ ծաւալւող դէպքերի մէջ, որպէսզի կարողանայ ղեկավարել այդ անցքերը։

Եւ նրա գալու հէնց առաջին օրը, Պետերբուրգի մեծամասնական կուսակցութեան կօմիտէի հանդիսաւոր նիստում Վլադ. Իլիչի արտասանած ճառից զգացւեց, որ եկել է բանւորների իսկական առաջնորդն, այնպիսի մի առաջնորդ, որ իրեն զէնքը ցած չի դնի և որը անշեղ կերպով յառաջ կգնայ մինչև աշխատաւորութեան լիակատար յաղթանակը, չբաւարարւելով կիսատ-պռատ չափերով։ Ներկայ եղող ունկնդիրների համար այս ճառը բաց արեց նոր, լայն խնդիրներ, որի մէջ առաջին անգամ արտասանւեց «Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» լօզունգը։

## Լենինի թշնամիները.

Բուրժուաների և համաձայնողականների շարքերում սոսկալի ոռնոց և խլրտում ընկաւ։

Համաձայնողականները (մենշևիկները և էսէր-
ները) այդ ժամանակ աշխատում էին ժողովրդին
համոզել, որ Լենինի դատողութիւնների մէջ ոչ մի
լուրջ բան չկայ, որ յեղափոխութիւնը չի կարող
յաղթել բուրժուաներին։ Մի խօսքով, որ եկել է,
ոչինչ, կեանքից բոլորովին անտեղեակ մի մարդ, և
նրա ասած խօսքերը «Իշխանութիւնը խորհուրդնե-
րին», ոչ այլ ինչ են, եթէ ոչ «խելագարի զառան-
ցանքներ»։

Այժմ կեանքը ցոյց տուեց, թէ ով էր ճշմարիտ։
Իսկ բուրժուայական թերթերը։ Նրանք ուղիղ հաս
տատուն, որ գործ ունեն իրենց ամենաանհաշտ և հե-
տևողական թշնամու հետ։ Ինչպէս քաջքաքամի Լե-
նինին շուրջը պտոյտ եկան, ամենաանամօթ, ամե-
նամոլի զրպարտութիւններն ու բամբասանքները։
Ուրիշ զէնք չունէին, բացի մեղադրանքից, որ նա
կաշառուած է, ծախուած գերմանացիներին և այլն և
այլն։ Ի՞նչեր ասես չհնարեցին, ի՞նչ կեղտ ասես
չքսեցին Լենինի գլխին։ Եւ այս ամենը արեցին
նրանք, ովքեր այժմ բացարձակ երազում են գերմա-
նացիների օգնութեամբ յեղափոխութիւնը խեղդել։

Ընթերցողը յիշում է, թէ ինչպէս այն ժամա-
նակուայ կառավարիչները՝ մենշևիկները և էսէրները,
բուրժուաների պահանջմամբ, բռնեցին և
բանտ դրեցին բանւոր դասի բոլոր ականաւոր առաջ-
նորդներ՝ Տրոցկուն, Լունաչարսկուն, Կամենևին,

Ռասկոլնիկովին և ուրիշներին։ Հրաման էր տուած նոյնպէս, բուրժուաների ատելի Լենինի ձերբակալման համար։ Բայց Պետերբուրգի առաջաւոր բանուորները իրենց վրայ վերցրին, իրենց առաջնորդի պաշտպանութեան գործը, և' որքան էլ չարչարուեց Կերենսկին յամենայն դէպս նրան չյաջողուեց բռնել Լենինին։ Իսկ Լենինը այստեղ էր և յեղափոխական պրոլետարիատի իւրաքանչիւր մի քայլը, քննում էր նրա հետ միասին։

Հոկտեմբերեան յեղափոխութեան յաղթանակը միանգամայն սրբեց բուրժուազիայի և նրա դաշնակիցների իշխանութիւնը։ Իշխանութեան գլուխն անցաւ պրոլետարիատն և նրա հաւատարիմ դաշնակից չքաւոր գիւղացիութիւնը։ Եւ երբ որ խօսք եղաւ բանուորա-գիւղացիական կառավարութեան անդամների ցուցակի մասին, այն ժամանակ առաջին անունը տուեց փորձուած, անվեհեր մարտիկ, Վլադիմիր Իլիչ Ուլեանով Լենինին, որին բոլորը խորապէս հաւատում էին և յարգում։ Ինքը կեանքը հաստատեց նրա հայեացքների ճշմարտութիւնը և ուղիղ լինելը։ Հալածուած, հալածանքի մէջ պահուող յեղափոխական Վլադիմիր Իլիչին կեանքը դրեց, ամենապատուաւոր և ամենածանր ու պատասխանատու տեղը. նա դարձաւ բանուորա-գիւղացիական կառավարութեան գլուխը, սոսկալի ծանր պայմանների մէջ։ Այսպէս է այդ մարդու բախտը։

Նա շարունակ, անշեղ գնում է դէպի իր նշանադրած նպատակը, ամենևին ուշադրութիւն չդարձնելով այն բանին, թէ ինչ են խօսում իր մասին թշնամիները։ Նա գիտէր, գիտակցում էր որ ինքը ուղիղ է։

Նա թշնամիներ շատ ունի։ Բայց ինչպէս խորը նրան ատում են բուրժուաները, այնքան, անչափ էլ սիրում և գնահատում են նրան բանւորները և գիւղացիները՝ ամբողջ այն չքաւորութիւնը, յանուն որի ազատութեան կապիտալի լծի տակից, նա տալիս էր և տալիս է իր ամբողջ ուժերը։

Բ 333
ՎԳՀ
66

Գինը՝ 1 ռուբ.